№ 186 ՀՈՐԵՔՀԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԵՔՀԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 № 186

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՅ 1908 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր. մէկ ամսվանը 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնակայա փողոցների անկիւն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

(ԹԱՒՐԻԶԻ, հեռագրով)

Գեներալ Միրզա Անտոն-խան Երուանդեան, Վարվառէ Առաքելեան, Մարիամ Աստուածատրեան Առաքելեան, Զաքարիա Նազարբէգեան յայտնում են խորին վշտով ազգականներին և ծանօթներին, որ կիրակի, դեկտ. 16-ին, Թաւրիզում վախճանվեց երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ

ՍՕՖԻԱ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

առաջնի՝ ամուսինը, երկրորդի՝ դուստրը, երրորդի՝ քոյրը և չորրորդի՝ քեռին։
(չ. հ.) 1—2

Եղիսաբէթ Միքայէլեան Առաքելեան, Համբարձում և Արշակ Առաքելեանները, Հեղինէ Առաստամեան խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ դեկտեմբերի 16-ին Թաւրիզում վախճանված տիկին

ՍՕՖԻԱ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆԻ

(ծնեալ Առաքելեան), առաջնի տալի, միւսների քրոջ մահվան առիթով նշանակված է

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

հինգշաբթի, դեկտ. 20-ին, Մողնու եկեղեցում պատարագից յետոյ, ժամը 12-ին։
(չ. հ.) 1—2

ՄՕՍԿՎԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ.

ԱԼԹՎԱՆԳ

Պատրաստ սպիտակեղէնի և օժիտեղէնի

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ

Տօների համար ստացված են

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

գեղեցիկ սպիտակեղէն, վզնոցներ, մանժէտներ, փողպատներ (գալստուկ), բլուզներ և կանանց առաւօտեան զգեստներ (պէնուարներ)։

ՀԵՌԱԽՕՍ 477, 555.

10—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ դեկտեմբերի 20-ին նշանակված է ընդհանուր ժողով՝ անցեալ ընդհանուր ժողովից մնացած հարցերը քննելու համար, հանգուցեալ Մկրտիչ I կաթողիկոսի անունով թոշակաւոր նշանակելու հարցով հանդերձ։ Այս ժողովին կը քուէարկվեն այն անձինք, որոնք նշանակված են ժողովարանի կանդիդատներ։ 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարոյական միջոց. Վերջին տեղեկութիւններ. Գործերը Պարսկաստանում. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Աբելեանի յօբելեանը. Կովկասագիտական կուրսերից. Թատրոն և երաժշտութիւն. Թիւրքահայ սովեալների օգտին. Կովկասահայ սովեալների օգտին. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ռուսական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Մի քանի գաղութների առիթով. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիւրքիայի յեղափոխութիւնը. Պարսկական գործերը. Նամակ Պարսկաստանից. Պրոֆեսոր Տօմսոն. Խառն լուրեր. ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Ցիշողութիւններ Խրիմեանի մասին. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ

Ինչու այդքան հեշտ են կատարվում գողութիւններ, կողոպուտներ և սպանութիւններ։ Ինչու մարդ հեշտութեամբ ձեռնամուխ է լինում այնպիսի մի ոճրի, որից նա սարսափում էր առաջ։

Մէթէ այն մարդը, որ գնում է ոճիր գործելու, չը գիտէ, թէ նա մի այնպիսի գործի է ձեռնարկում, որով վտանգի է ենթարկում իր կեանքը։

Անշուշտ գիտէ։

Եւ որ զարմանալին է, յաճախ այն մարդկանց շարքերում, որոնք բռնվում են ոճրագործութեան մէջ, մենք տեսնում ենք չքաւորների հետ միասին շատ ուրիշների, որոնք նիւթականի կողմից ամենևին թշուառ և յուսահատ վիճակի մէջ չեն, որոնց մօտ գտնվում են ապրուստի միջոցներ և որոնք իրանց թոյլ են տալիս շռայլութիւններ և անսովոր վայելքներ։

Այդտեղ շարժվել և գործել են սկսում ամեն բացառիկ դրութեան մէջ ընկած անհանգիստ, դիւրագրգիռ անձնաւորութիւններ իրանց տրամադրութիւններով, որոնք այնքան համարձակ, յանդուգն և իրերի վիճակը որոշող են հանդիսանում, որքան ինքը շրջապատող հասարակութիւնը ցոյց է տալիս իրան անօգնական, տարտամ, մեղկ և կրաւորական։

Հասարակութեան բարոյական մթնոլորտը այդտեղ խոշոր և վճռական դեր է կատարում։

Եւ եթէ ինքը հասարակութիւնը որոշ դիրք չի բռնի դէպի տեղի ունեցող երևոյթները, ոչ մի բան չի փոխվի և անմխիթարական վիճակը կը շարունակվի երկար ժամանակ։

Հասարակական կարծիք, հասարակական հաւանութիւն կամ պարսաւանք, հասարակական դիտակցական վերաբերմունք—ահա ինչը վերջ կը դնէ այդ դրութեան։

Փիզիքական հալածանքի ձևերը չեն օգնի գործին և կարող են նոյնիսկ մնասել նրան։ Եթէ հասարակական մթնոլորտը ինքը բարոյապէս մաքուր և առողջ չէ, եթէ նա իր մէջ պարունակում է հիւանդոտ սաղմեր, ոչ մի մասնաւոր ֆիզիքական հալածանք չէ կարող առաջացնել բարի հետևանքներ։ Դա միայն ոստիկանական գործունէութիւն է, որը և պէտք է վերապահել ոստիկանութեանը։

Պէտք է գործել ուրիշ ուղղութեամբ, պէտք է բարոյական մթնոլորտը դարձնել այնպիսի մի առողջ միջավայր, որի մէջ չը կարողանան գոյութիւն պահպանել հակահասարակական յանցաւոր տարրեր։ Դա է էականը, դա է արմատականը։

Մէթէ մի հասարակութեան մէջ, ուր ամեն օր տասնեակ մանաւոր դէպքերում զանազան կենսական հարցեր քննելու ժամանակ մարդիկ առաջ են տանում անձնական հաշիւներ և հեշտութեամբ արտասանում են այնպիսի նախադասութիւններ, թէ սրան պէտք է նահատակել, միւսին սնանկացնել, երրորդին զրպարտութեան զոհ շինել կայլն կայլն, մէթէ մի այդպիսի հասարակութեան մէջ կարող է որևէ բարտրում առաջ գալ, մինչև ինքը հասարակական մթնոլորտը չը բարեփոխվի, մինչև մարդիկ չը սկսեն բարձրաձայն և համարձակ դատապարտել ամեն մի կեղծիք, ամեն մի բռնութիւն և ամեն մի ոճիր, մինչև մարդիկ առաջ չը բերեն ուժեղ և անընկճելի հասարակական կարծիք՝ խրախուսիչ ազնիւ գործողների և պարսաւիչ մթութեան զինուորների համար։

Մաքուր բարոյական մթնոլորտ, առողջ հասարակական կարծիք — ահա մեր որոնածը. ահա ինչի վրա պէտք է հիմնված լինի հասարակական յանցանքների դէմ մարտումը։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարսից գեներալ-հիւպատոսը «Кавказъ» լրագրին խնդրել է տպել հետևեալ պաշտօնական հեռագիրը, որ պարսից գեներալ-հիւպատոսարանը ստացել է Պարսկաստանի ներքին գործերի մինիստրութիւնից դեկտեմբերի 16-ին.

«Այն թիւրիմացութիւնները, որոնք ծագեցին կառավարութեան և ժողովրդի մէջ, բոլորովին վերջացան։ Նորին Կայսերական Մեծութեան Շահի և պարսից պարլամենտի միջև կայացաւ լիակատար համաձայնութիւն։ Շահը և բոլոր մինիստրները հանդիսաւորութեամբ երդուեցին, դնելով ձեռքները Ղուրանի վրա, սրբութեամբ պահպանել Պարսկաստանի բոլոր սահմանադրական օրէնքները։

Կազմվեց մինիստրների նոր կաբինէտ։ Բոլոր խանութները, դպրոցները և կառավարական հաստատութիւնները բաց են։ Նորմալ կեանքը վերահաստատված է»։

—

Պետերբուրգ, 14 դեկտեմբերի.—Պետական Դուման հաստատեց 1907 թ. անբերրիութիւնից մնացած ազգաբնակութեանը օգնութիւն հասցնելու առաջարկութիւնը։ Յատկացված 15 միլիոնից Երևանի նահանգին բաժին է ընկնում՝ 121,000 ռուբլի, իսկ Դաղստանի շրջանին՝ 400,000 ռուբլի։

Քութայիս, 16 դեկտեմբերի.—Երէկ երեկոյեան, թատրոնի մօտ, ատրճանակով ծանր վիրաւորեցին կառքով անցնող բժիշկ Բակրաձէին։ Վիրաւորվածին հասցրին բժշկական օգնութիւն, բայց գնդակներից ոչ մէկը չյաջողվեց հանել։ Պասկածով ձերբակալված է մէկը։

Նոյն օրը կայացաւ քաղաքացիների ժողովը, խորհրդակցելու՝ թէ ինչպէս պէտք է կռիւ մղել կողոպտումների և աւազակութիւնների դէմ։ Ժողովը անհրաժեշտ գտաւ աւելացնել քաղաքապահ ոստիկանների թիւը։ Դրա համար հարկաւոր 10,000 ռուբլի գումարը կը տայ վաճառականութիւնը։

Բաթում, 17 դեկտեմբերի.— Այսօր կովկասեան զինուորական դատարանը, քննելով Իւստին Գոգաձէի գործը, որ մեղադրվում է Օզուրգէթի գաւառապետ Երմոլովի կեանքի դէմ մահափորձ կատարելու մէջ, նրան արդար ճանաչեց։ Պաշտպանում էր երդ. հաւատարմատար Զափարիձէն։(«Т. Л.»)

—

17 ր., Տաշքէնդում տեղի ունեցաւ զգալի երկրաշարժ, հօրիզօնական ուղղութեամբ, արևմուտքից արևելք. ամբողջ շինութիւնը օրօրվեց օրօրոցի նման, շարժվեց փակված դուռը և առաստաղից կախված լամպան։ Երկրաշարժը տևեց մի րոպէ։ Շնորհիւ այն բանի, որ երկրաշարժը տեղի ունեցաւ գիշերը, շատերը չեն իմացել. եթէ ցերեկը լինէր, ժողովուրդը կահաբեկվէր, ինչպէս հոկտեմբերի 8-ին։ Այս կողմերում երկրաշարժների յաճախակի կրկնվելը բացատրվում է այս կողմերում գտնվող հարուստ նաւթահանքերով, որոնք դեռ ևս չեն մշակված։ Դարձնում ենք սրա վրա հայ հասարակութեան ուշադրութիւնը։

—

Թաւրիզ.—Տեղական սահմանային մասնաժողովը հասաւ Մավանա։ Ուրմիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, Բարադօստում թիւրքերը նոր օժանդակիչ օգնութիւն են ստանալու։ Սօուջ-Բուլաղ եկաւ թիւրքաց կանոնաւոր զօրքերի մի խումբ։ Նշանակված է թիւրք կառավարիչ։ («Հ.»)։

ԴՈՐԾԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

Մէջլիսի մանիֆեստը պետութիւններին.—Բէյտերի գործակալութեան Թղթակիցը հետևեալ քաղուածքներն է հաղորդում այն հեռաքրքրական դոկումէնտից, որը պարսից մէջլիսը ուղարկել է օտար պետութիւնների թէհրանի ներկայացուցիչներին։

«Երբ պարսկական կայսրութեան գործերը անյուսալի դրութեան մէջ ընկան,—ասվում է այնտեղ,—ժողովուրդը տեսաւ, որ իր միակ յոյսը սահմանադրական կառավարութիւն հիմնելն է։ Հանգուցեալ շահը սահմանադրութիւն շնորհեց Պարսկաստանին, ներկայ գահակալը հաստատեց նրան իր երդումով։

«Բայց այն մարդիկ, որոնք բռնակալական կառավարութեան ձեւի ժամանակ տովորել են կեղեքել ժողովրդին, խաբեցին մեր երիտասարդ միապետին, համոզելով նրան որ սահմանադրութիւնն է այն բոլոր դժուարութիւնների պատճառը, որոնց մէջ գտնվում է ներկայումս մեր հայրենիքը։

«Ժողովուրդը երբէք ինքը չի խախտի խաղաղութիւնը, բայց նա մինչև իր արեան վերջին կաթիլը կը պաշտպանէ այն բոլոր ազատութիւնները, որի դէմ դաւեր են լարում մեր կառավարութեան յետադիմական անդամները։ Նա կը կռվէ իր վիակ ու վերջին յոյսի համար՝ սահմանադրութեան համար։

«Ներկայ մանիֆեստով պարսկական ժողովրդի ներկայացուցիչները տեղեկացնում են ի գիտութիւն բոլոր օտար պետութիւնների դեսպանութիւններին և առհասարակ թէհրանում ապրող բոլոր օտարերկրացիներին՝ իրերի իսկական դրութեան մասին և յայտարարում են, որ Պարսկաստանի միապետը խախտել է այն դաշնագիրը, որ նա կնքել է իր ժողովրդի հետ։

«Պարսիկ ժողովուրդը դիմում է աշխարհի բոլոր ազգերին, հաւատացած լինելով որ այդ ազգերը կարտայայտեն իրանց բարեկամական զգացմունքները Պարսկաստանի 10 միլիոն ազգաբնակութեանը և թոյլ չեն տայ չարամիտ մարդկանց ոտնատակ տալու այդ ազգաբնակութեան սրբազան իրաւունքները»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԲԵԼԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Երկուշաբթի, դեկտ. 17-ին, ինչպէս յայտարարված էր, Թիֆլիսի արտիստական թատրոնում կայացաւ դերասան Յովհաննէս Աբելեանի քսանհինգամեայ բեմական գործունէութեան տօնախմբութիւնը։ Դրամատիկական ընկերութիւնը և յօբելեանական կարգադիր ժամնաժողովը ամեն ջանք գործ էին դրել հանդէսին փայլ և շքեղութիւն տալու։ Այդ երեկոյ Աբելեան մասնակցում էր երեք պիէսների մէջ, որոնց ամեն մէկից մի-մի գործողութիւն ներկայացվեց, այն է «Ուրուականներ», «Արցունքի հովիտը» և «Կրեչինսկու հարսանիքը» պիէսները։

Յօբելեանական հանդէսը կատարվեց I և II գործողութիւններից յետոյ։ Շրջանի ձևով շարվել էին զանազան ազգային, հասարակական և օտարազգի (ռուսաց, վրացի) հաստատութիւնների ներկայացուցիչները և պատգամաւորները իրանց ուղերձներով և նուէրներով։ Յօբելեարին բեմ առաջնորդեց հայ բեմի վետերան-դերասան Գաբրիէլ Սունդուկեան, որ մի քանի զգացված խօսքերով ողջունեց նրան և իր կողմից նուէր տուեց իր պիէսների ժողովածուն։ Ապա հետզհետէ կարդացին իրանց ուղերձները և խօսեցին հայոց դրամատիական ընկերութեան, վրաց դերասանական խմբի, ռուսաց դրամատիական խմբի, Թիֆլիսի ժողովարանի հայ սիրողների, հայուհեաց բարեգործական ընկերութեան, Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան, Մեղու ընկերութեան, Թիֆլիսի ժողովարանի, Արտիստական ընկերութեան, Ուսուցչական միութեան, հայ դերասանական խմբի, Արմենեանի խմբի պատգամաւորները և տեղական հայ թերթերից «Մշակի», «Աղբիւր-Տարազի», «Ցուշարարի», «Վաստակի» խմբագրութիւնների ներկայացուցիչները, ինչպէս և մի քանի դպրոցների հայ աշակերտների պատուիրակները։ Բացի ուղերձներից, կարգադիր ժամնաժողովի, իրա յօբելեարի և «Մշակի» խմբագրութեան անունով ստացվել էին և բազմաթիւ՝ մօտ 70 հեռագիրներ զանազան տեղերից։ այդ հեռագիրների մի մասը կարդացվեց բեմի վրա։ Առանձին տպաւորութիւն թողեց ռուսաց շնորհալի դերասան Շօրշտէյնի ճառը, որ ընդունվեց բուռն ծափահարութիւններով։ «Մշակ» լրագրի կողմից մի քանի խօսք ասաց Հ. Առաքելեան, որ շեշտեց այն հանգամանքը, թէ հայ մամուլի մէջ «Մշակը» առաջինն է ողջունել 25 տարի առաջ յօբելեարի դողդոջուն, պատանեկական քայլերը բեմական ասպարէզում, գուշակել է նրա մէջ տաղանդ, յաճախ խստութեամբ քննադատել է նրան, որովհետև ում շատ է տրված, նրանից շատ և պահանջվում է, բայց դերասան Աբելեանը դիմացաւ այդ քննադատութեան և այսօր «Մշակը» ուրախութեամբ տեսնում է, որ նրա գուշակութիւնը իրականացաւ։

Դարձեալ ինքնագիր նամակներ Ալիշանի։ Ամենայն հոգեբանութեամբ գրուած նամակներ, որոնց մէջ ամենայն հանգամանքներ, ինչպէս ասենք, ամենայն գոյներ։ Ամենայն գոյներ, ինչպէս ասենք, ամենայն հանգամանք

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Ինչպէս հաղորդում են պաշտօնական «Правит. Вѣстникъ», «Россія», «Сельск. Вѣст.» և ուրիշ մամուլը թերթերը, որոնք կառավարչական նպաստ են ստանում իրանց հրատարակութեան համար, 1907 թիւը զանձարանի վրա նստել են 1,100,000 ռուբլի։ («Т.»)

✦ Դեկտեմբերի 9-ին կայացած ռուսական կանանց փոխադարձ բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովում տ. Կալմանօվիչը մի զեկուցում է կարդացել համառուսական ազգային կանանց խորհուրդ հիմնելու մասին։ Ազգային խորհուրդը մըտնելու է բոլոր երկիրներում հիմնված այդ տեսակ խորհուրդների միջազգային կօնգրեսի կազմի մէջ։ Ժողովը որոշել է դիմել Ռուսաստանում գոյութիւն ունեցող կանանց բոլոր ընկերութիւններին ու խմբակներին նըրանց ցանկութիւնը այդպիսի մի խորհուրդ հիմնելու մասին և համաձայնութիւն ստանալու դէպքում՝ շտապել կազմակերպելու։ Ընկերութեան նախագահուհի տ. Շարանովան զեկուցել է համառուսական կանանց առաջին համագումարի ծրագրի մասին, որը հրաւիրվելու է ընկերութեան կից կազմված կանանց ընտրողական իրաւունքների բաժանմունքի հաստատմամբ։ Ժողովը որոշել է համագումարը հրաւիրել Պետերբուրգում յունիս ամսին։

✦ «Поволжье» լրագրում տպագրված է հետևեալ նկատողութիւնը. «Վոյլոկի գաւառը վաճառվում է։ Ամբողջ գաւառի գիւղացիների շարժական և անշարժ գոյքը՝ հարկերի ապառիկները հաւաքելու նպատակով՝ ցուցակագրվում է և աճուրդի հանվում»։

✦ Ն.-Նովգորոդում, մօտ ժամանակներս, երեկոյեան, քաղաքից դուրս 7-րդ դասարանի երկու գիմնազիստուհիներ գնդակահար են արել իրանց։ Նրանցից մէկը վիրաւորված է մահացու կերպով, իսկ միւսը առողջանալու յոյս է տալիս։ Այդ ծանր դրամայի պատճառը բացատրվում է նրանց թողած նամակում, որտեղ նրանք գրում են, որ վճռել են վերջ տալ իրանց «անտանելի կեանքին»։ Ինչպէս երևում է՝ նրանցից մէկը կրակել է նախ իր ընկերուհուն և ապա միայն իրան։ («Рѣчь»)

✦ Ինչպէս հաղորդում է «Голосъ Правды» լրագիրը, արժանահաւատ աղբիւրներից ստացված վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ վերջնականապէս վճռված է ֆինլանդական գէներալ-նահանգապետ նշանակել գէներալ Բոբիկովին։

✦ Օգուտ քաղելով իրերի ներկայ «նըպաստաւոր դրութիւնից», այն է Պետական Դումայի կազմից, Կիէվի հոգևորականութեան շրջանում ուզում են հարց զարթեցնել հոգևորականութեան նիւթական դրութիւնը բարւոքելու համար, գլխաւորապէս աւելացնելով եկեղեցապատկան հողերի տարածութիւնները այժմվայ քանակից երկու անգամ աւելի, հասցնելով իւրաքանչիւր եկեղեցուն պատկանող հողը մինչև 72 դեսեատին։ («Кіев. М.»)

✦ Իրիէվում, «Год. М.» լրագրի ասելով, երևան է հանված աշակերտական մի կազմակերպութիւն բաղկացած 20 գիմնազիստներից և բէալիստներից, որոնք սիստեմատիկ կերպով կողոպտում էին գրավաճառանոցներն ու դասական առարկաներ վաճառող խանութները։

✦ «Туляк. М.» լրագրի ասելով, Կրօնշտադից եկած խանութպանները (Իոանն Կրոնշտադսկու հետևողները) վերջին ժամանակներս մեծ ուշադրութիւն են դարձնում պետական գիմնազիաների ծառայողների վրա։ Նրանք մտնում են խանութ-խանութ և համոզում նրանց «մեղա գալ» և գնալ «Թանգագին հօր» երկրպագելու։ Ինչ խօսք որ իսոանիսուհիներին գրաւում է ծառայող կանանց ունեցած գրաւական դրամները... հիշա այնպէս, ինչպէս պատկերացված է «Սև ագրաւներում»։

ՄԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ *)

(Իմ ուսերին ձեռնարկի մասին)

—

Ես ասել եմ, թէ մեր ուսումնարաններում չը գիտեն լեզու (նոյն իսկ մայրենի լեզու) դաս տալ, թէ կան բազմազան խորհրդաւոր վարժութիւններ, որ մերոնք չեն գործածում։ Եւ ոչ միայն այդ բանը լոկ միայն ակնարկել եմ, այլ իմ գրքի մէջ մի առ մի ցոյց եմ տուել այդպիսի բեղմնաւոր վարժութիւնները, այն ևս շատից քիչը, որովհետև մնացած բարդ և բարձր վարժութիւնների կարգը պիտի գար իմ գրքի միւս հատորներում։ Դեռ միայն հասարակ արտագրութիւնն ու թելադրութիւնը որպիսի նոր լուսով լուսաբանեցի, որոնք մեր ուսումնարաններում գործ են ածվում անօգուտ և ապարդիւն կերպով, լոկ որպէս անմիտ ժամանցութիւն։ Այն նորընծայ ուսուցիչներն ու մանաւանդ վարժուհիները, որոնք մեր փոքրիկ մանուկներին մինչև այսօր տեմաներ են առաջարկում շարադրութեան համար և միշտ ասնդի մէջ ջուր են ծեծում, պէտք է համոզվին, որ փոխանակ տեմաներ տալու կարելի է ամեն մի դասին նոյն դասից նիւթ բաղել արդիւնաւոր վարժութեան համար, և որ մի ապշեցուցիչ նորութիւն է մերոնց համար։ Այս բոլորը ես ցոյց եմ տուել «Հատընտրիքի» յօդուածներում, թէև կարճ և հարեանցի կերպով, և ոչ թէ գրքիս յաւելուածի մէջ՝ այսինքն այբուբենական մասում։ Այսպիսի ծանրակշիռ խնդիրը բոլորովին վրիպում է պ. Ղազարեանի աչքից։ Նա ինչ-որ ուրիշ վարժութիւններ է փնտռում, այն ևս միայն իմ այբբենարանի մէջ։ Նա փնտռում է պատկերներ, rebusներ, զիզի-պիզիներ... և չէ գտնում. նա փնտռում է (իւրատեսակ) պատմելու, խօսելու, բացատրելու նիւթեր... և չէ գտնում (???)։ Միով բանիւ նա փնտռում է, ինչ որ չը կայ, բայց չէ տեսնում, ինչ որ առդեամբ կայ։ Քննադատութեան ամենատգեղ ձևը այս է։ Եւ այս շփոթութիւնը առաջ է գալիս այն հանգամանքից, որ պ. քննադատը մի կուռք ունի նստած իր գլխում (Բեկոնի ասած իդօլա), նա երդուելով երդուում է Բերլիցի անունով։ Սակայն Բերլիցը, Ռօբերտսօնը, Մարգոնը իմ համար միշտ նոյն զրօ և անպէտ բաներ են։ Ես ձեր առաջ բոլորովին այլ անծանօթ բան եմ հանդիսացրել. դուք այն քննեցէք, կարելի է աչքերը բաց անէք և տեսնէք, որ աշխարհում՝ բացի Բերլիցից՝ ուրիշ բաներ էլ կան...

Այսպէս պ. Ղազարեանը, բուն խնդիրը («Հատընտիրքի» վարժութիւնները) թողած, իմ այբբենարանի եռանից է ընկած և մէջը փնտռում է պատկերներ, rebusներ։ Իսկ մէջը կայ մի ուրիշ rebus՝ գրագիտութեան ուսուցման organական մեթոդը։ Ահա նա որտեղ պէտք է ցոյց տար իր բոլոր սրամտութեան ոյժը, բայց նա ամենայն խոհեմութեամբ զանց է առնում այդ ծանրութիւնը, աւելի հեշտ համարելով մեզ զբաղեցնել Բերլիցներով և հասարակ տեղիներով։

Նա մի հարցմունք է տալիս ինձ. միթէ հնարաւոր է, ասում է, միթէ մանկավարժօրէն է մի չորստողանի («Саранча») դասը անգիր սովորեցնելուց յետոյ՝ մանուկներին 15 տառ սովորեցնել։ Հիմի ես եմ հարցնում. ես ի՞նչ եմ ասել այդ բանը։ Ես միայն մատնացոյց եմ արել, թէ այն դասի մէջ պատահում են 15 տառեր, ուսուցչին թողնելով, որ ինքը իր բարեհաճութեամբ օրոշէ այդ դասում ուսուցանելու տառերի թիւը։

Այստեղ իմ այբբենարանի մասին ուրիշ ոչինչ չեմ ուզում ասել, որովհետև մեր ուսումնարաններում պարզ տրամադրութիւն է երևում ռուսերէնը սկսել 2-րդ տարվանից և ոչ թէ 3-րդից։ Այդ պատճառով ես մտադիր եմ այբբենարանը նոր կազմել 2-դ տարվայ համար և իմ քննադատի բոլոր տարակուսանքները այն ժամանակ փարատել, որոնք դարձեալ մի շարք թիւրիմացութիւններ են։

*

Վերջապէս պ. Ղազարեանը նկատում է և այն, որ իմ ընտրած յօդուածները և բարձր են III տարվայ աշակերտների կարողութիւնից և շատ երկար են. զոր օր. «Сказка о царѣ салтанѣ» հէքիաթը այնքան երկար է համարում և այնքան հարուստ բառերով ու դարձուածքներով, որ հարիւ թէ երկու տարվայ մէջ մանուկները կարողանան վերջացնել։

Իմ դժբաղդութիւնն այն է, որ պ. Ղազարեանը թէպէտ Ուշինսկուն, Գրիգորեվին, Կարխանիդուն, Վօլպէրին մեր ուսումնարաններից դուրս քշից, բայց դարձեալ նրանց հրաշալիքները փնտռում է իմ դասագրքի մէջ։ Իմ հանգամանքները այլ են եղել, գործն էլ ըստ այնմ այլ է։

Անկարելի բան չէ հասկանալ, որ ես իմ դաւանած սկզբունքներով ինքս շատ դժուարացրել եմ իմ գործը։ Ես պէտք է հայ մանուկի հայեցողութեան մտքին՝ ոչ մի ընթերցարան ստեղծէի, որ բաղկացած լինէր ոչ թէ փէշակաւորի ձեռքով տաշած, կպցրած ու թխած անհամ յօդուածներից, այլ ռուսաց գեղարուեստութեան ստեղծագործութիւններից։ Բայց որչափ աւելի ճիշտ և ճոխ կերպով կարող էր այդ գործը կատարել մի վրացի վրացիների համար, քան հայն՝ հայերի համար։ Միայն Պուշկինն ու Լերմոնտովը որքան առատ նիւթ են մատակարարել վրացիներին, և որքան աղքատ՝ հայերին։ Ահա այսպէս կաշկանդված լինելով, ես շատ անգամ ստիպվում էի և այնպիսի ընտրութիւն անել, որ վրացին չէր անի։ Եւ որովհետև բնական իրականութիւնը ես չէի կարող փոխել, այլ պէտք է ընդունէի, ինչպէս որ այն է և կայ, ինձ ճնում էր, որ դէթ մեթոդով ցոյց տայի դժուարութիւնները յաղթելու շատ ու քիչ հնարաւորութիւնը։ Եթէ պ. Ղազարեանը իմ մեթոդը չէ ուսումնասիրել և միշտ ուզեցել է իր արշինով չափել մի նոր երևոյթ, որ Վօլպէրների և Բերլիցների տարաղով չէ ձևացած, ես այդ բանում պատասխանատու չեմ։ Ես հանաք չեմ արել, երբ որ ասել եմ, թէ «հայերէնը պիտի լինի հիմք, ռուսերէնը նրա վրա կառուցած շէնք». և ես ըստ կարելւոյն այդ խոստումս կատարել եմ, ձեզ բոլորովին անծանօթ եղանակով։ Այո, ես զգում եմ, որ մեր չափերը տարբեր են. արդ եթէ կարծում էք, որ իմ դասագիրքը բարձր է գ. տարվայ համար, գործ դրեցէք դ. տարվայ համար, մինչև որ թերևս վերջապէս գտնէք դրա իսկական տեղը։

Հիմի՝ յօդուածի երկարութեան մասին։ Ինչու յոյները ամբողջ Հոմերոսն էին բերան առնում. ինչու միջին դարերում Դանտէի «Աստուածային կատակերգութիւնն» էին ուսանում... է՞հ, կասէք, այդպէս կատարվում էր հին, մաշված շկոլաների խելքով։ Հապա ինչու Հերբարտեանները մի ամբողջ տարի պատմել են տալիս «Ռօբինզօն», «Նահապետների պատմութիւն», «Ոդիսական». նրանք ինչու ֆրանսերէնը ուսուցանում են Վօլտերի «Կարլոս XII-ի պատմութեամբ». այս էլ ձեզ նոր շկոլա։ Այո, իմ ընտրած «Сказка о царѣ салтанѣ» երկար է. բայց այն բաժանված է փոքրփոքր հատուածների, որոնցից իւրաքանչիւրը մի ամբողջութիւն է դառնում շնորհալի ուսուցչի ձեռքում. իսկ եթէ ուսուցիչը իմ մեթոդական ցուցմունքները մնուշադիր կը թողնէ Ղազարեանի պէս, թող մեզքն էլ իր վրա առնէ։ Արդարև այն «Сказка»-ն երկար է, եթէ տողերի թիւով չափենք։ Այնտեղ կայ մօտ 1000 տող։ Բայց նրա մէջ մի հատուած կայ, որ սկսվում է «Вѣтеръ по морю гуляетъ»... բառերով, միւսը՝ «Вѣтеръ весело шумитъ»..., երրորդը՝ «Князь у синя моря ходитъ»... և այն, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է 40, 60 և 70 տողերից։ Արդ, դրանք զանազան յեղափոխումներով հէքիաթի մէջ կրկնվում են երեք-չորս անգամ, որով իսկական տողերի թիւը իջնում է գրեթէ մինչև 500-ի։ Այս 500 տողերն էլ Պուշկինի երաժշտական տաղաչափութեամբ աննմանելի թեթևութիւն են ստանում։ Մենք կարող ենք Թիֆլիսի Գօլօվինսկի պրօսպէկտը մի անգամ կտրել-անցնել և յոգնել. բայց եթէ մի հաճելի խմբով 10 անգամ ետ ու առաջ զբօսնենք՝ այնպէս յոգնութիւն չենք զգայ։ Եթէ ուսուցիչն այն 500 տողը խմբով սովորեցնէ, ինչպէս որ բացատրել ենք, աշակերտները չեն յոգնի. բայց եթէ անշնորհք դասատուն սկսէ աշակերտներին հատ-հատ եկզամենի ենթարկել, նա կապացուցանէ, որ չէ ուսումնասիրել պ. Ղազարեանի պէս իմ բացատրութիւնները։

Առհասարակ հարկաւոր է փոքր-ինչ ազատվել երեխայական զիզի-պիզիներից և աւելի լուրջ կերպով նայել ուսման գործի վրա։

—

Ինչ որ պ. Ղազարեանը մինչև այստեղ ասաց, բոլորը մամուլի մէջ ասելու բաներ էին. նա շատ պարզ կերպով որոշեց խնդիրները և առիթ տուեց աւելի լուսաբանելու։ Բայց նա ուզում է անպատճառ անմահանալ, ուստի պէտք է լսենք նաև նրա վերջաբանը. «պ. Ս. Մանդինեանի «Хрестоматія»-ն մի հակամանկավարժական գործ է և միանգամայն անարժան որևէ դպրոցում ընդունելու»։

Ես Մանդինեանին չեմ պաշտպանի. թող ուրիշները քաջութիւն ունենան փոքր ինչ դաս տալու այն ազգային ապերախտներին, որոնք մի առանձին բաւականութիւն են զգում Նոյեան որդի Քամի դեր կատարելու։ Բայց ինչ շահեց հայ մանկավարժութիւնը, հայ դպրոցը այդ քննադատութիւնից. այն, որ մինչդեռ մեր դասատուները հրաւէր էին ստացել, որ Գրիգորեվների, Վօլպէրների, Կարխանիդների հեղձուցիչ մթնոլորտից դուրս գան, բացօդեայ ազատ շունչ քաշելու, այժմ նորից հրաւէր են ստանում, որ նրանք մտնեն դարձեալ իրանց հին որջը։ Ձեզ ուզում հաւատալ, որ մարդիկ այդչափ գիժ և անմիտ պիտի լինեն։

Պ. Ղազարեանը քննադատեց իմ «Хрестоматія»-ի առաջին գրքոյկը. ցոյց ունենանք, որ երկրորդն էլ կը քննադատէ։

Սեդրակ Մանդինեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ «ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ»

—

Ժողովրդական ամեն մի շարժում, ամեն մի ըմբոստացում, ինչ գոյնի և ինչ ձևով էլ նա կատարված ու երևան եկած լինի, բացի յեղափոխական լինելուց, բնական-պատկան-բիւրօկրատիկ կառավարութիւնների կողմից նկատված և նկատվում են հակակառավարչական պրօպագանդայի, յեղափոխական գործունէութեան տրդիւնք ու նրանց անմիջական հետևանք։ Եւ բնական-պատկան պետութիւնները «Ատուածուց սահմանված» հիմնական անբեկանելի օրէնքները և դրանցից ծնունդ առնող ուղղակի և անուղղակի հարկերի աստիճանաւորումները և այլ զանազան կարգի ու տեսակի հարկի սիստեմը անխախտ պահելու համար՝ ընդունում են դրանց յեղափոխական շարժումների տեղ և, «խաւնութիւն» անուանելով, ամեն միջոց գործ են դնում «խաղաղութիւնը» վերականգնելու համար։

Այդպէս է և Թիւրքիան, իր կազմակերպված ձևով մինը՝ ամենախայտառակ և ժողովրդասպան պետութիւններից։

Ցանձին Դաստէմոնիի, Էրզրումի և մի քանի այլ գաւառական քաղաքների դէպքերի, թիւրք մասսան էլ շարժվում, «յեղափոխականանում» է։

Թիւրք կառավարութիւնը սարսափում էր յեղափոխութեան ուրուականից, և հիւանդ երևակայութեամբ, այդ ցոյցերը համարում էր առաջիկայում պայթելիք համաթիւրքական ընդհանուր յեղափոխութեան նախանշաններ։ Այդ համոզմունքին էին նաև Թիւրքիայի կեանքին ծանօթ և թէ անծանօթ Կովկասի մի քանի հրապարակախօսներ։ Լաւատեսութիւնը նրանց իլլիւզիաների մէջ էր գցում։

Ընթերցողները անշուշտ գիտեն, որ այդ շարժումները առաջ եկան նոր տուրքերի աւելանալուց, որոնց մէջ գլխաւոր տեղն էր բռնում «շախսի վերկիսի» տուրքը,—ամեն մարդ, որ բաղդ էր ունենում Թիւրքիայում ապրելու՝ 35 զուրուշ (2 ր. 80 կ.) տարեկան հարկ պէտք է տար կառավարութեան մնդուկին։

Ով որ փոքր ի շատէ ծանօթ է Թիւրքիայի հարկային սիստեմի և գանձելու եղանակների հետ՝ նա անշուշտ նկատած կը լինի, որ հողագործ գիւղացիները անհամեմատ աւելի շատ են տուժում, քան քաղաքներում ապրող բարեկեցիկները և այդպէս համարվածները։ Երկրի ազգաբնակութեան ամենախոշոր տոկոսը գիւղացիներն են։ Դարերից ի վեր, համարեա՞ թէ, նրանց քրտնաջան աշխատութեան արդիւնքովն էր ամբողջ պետութիւնը պահպանվում, անկուշտ պաշտօնեաների և վաշխառուների մնդուկները լցվում։ Դարեր շարունակ այդ գող և կաշառակեր լէգէօնների երկարատև ու բազմազան շահագործութիւններից խպառ քայքայվել է հողագործ դասակարգի սօցիալական-տնտեսական դրութիւնը և մինչև անօթութեան դուռը հասցրել ու նրան այլևս անկարող դարձրել վճարելու պետական ծանր, տարէ-ցտարի աւելացող հարկերը։ Մնում էին քաղաքներում ապրողները և շատ չնչին քանակութեամբ գիւղերի առևտրականներն ու արհեստաւորները, որոնք իբրև ոչ հողագործներ, համեմատաբար շատ քիչ պետական հարկ էին տալիս, իսկ վերջերումս աւելացած տուրքերը, ի մէջի այլոց և «շախսի վերկիսին» հաւասարապէս ծանրանում էին և՛ ոչ-հողագործների վրա։

Եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ հողագործները, բառի ամենալայն իմաստով, տգէտ են, անգիտակ իրանց թշուառութեան գիրկը նետող շրջապատող պայմաններին և զուրկ նոյն իսկ թոյլ բողոք արձակելու համարձակութիւնից, իսկ ընդհակառակը՝ ոչ-հողագործները իրանց առանձնայատուկ պայմաններով, որպէս կիսա-արտօնեալ մի դասակարգ, աւելի համարձակ, ընդունակ բողոքելու և, որ գլխաւորն է, բծախնդիր իր շահերի նկատմամբ՝ թիւրք ժողովրդի հոգեբանութիւնից հեշտ է եզրակացնել այդ շարժումները առաջացնող պատճառները։

Այն ինչ հողագործը, որ սոսկալի կերպով շահագործվում էր կառավարութիւնից, ազաներից, բէկերից, վաշխառուներից և այլ ձրիակեր բաղդախնդիրներից, չէր համարձակվում և հնարաւորութիւն էլ չունէր ամեն կարգի շահագործողների դէմ բողոքել, ոչ-հողագործները, որ գիտակցութեամբ հոգեմտաբար բարձր էին, կարող էին թէ բողոքել և թէ, նոյն իսկ, «յեղափոխութիւն» առաջ բերել։

Ի՞նչ էին ներկայացնում այդ շարժումները. դրանց կարելի է նմանեցնել շատ բաների, բայց ոչ քաղաքական-յեղափոխական։ Ժողովրդական զանգուածային ցասումներ էին, որ բռնկեցին՝ կարճ ժամանակից յետոյ հանգչելու պայմանով։

Կովկասահայ ժամուլի մի-երկու օրգան-

— Կը տեսնենք, պ. Աղայեան, կը տեսնենք պատասխանում էինք մենք նրան։

— Սասունում լուրջ աշխատանքներ են կատարվում,—ասացինք մի անգամ Աղայեանին,—մեծ պատրաստութիւններ են տեսնվում և դրամի ահագին կարիք կայ. երբ Կովկաս վերադառնաք, աշխատեցէք մեծ գումար հաւաքել ու Սասուն հասցնել։

— Մինչև Խրիմեանը Կովկաս չը գայ, մենք ոչինչ չենք կարող անել,—եղաւ Աղայեանի պատասխանը։

— Իսկ ինչպէ՞ս ընդունեց Խրիմեանը ձեր առաջարկը կաթողիկոս լինելու մասին,—հարցրի ես մի անգամ Աղայեանին։

— Շատ ուրախութեամբ,—պատասխանեց նա։—Քանի որ իմ ժողովուրդը կամենում է ինձ այդպիսի ծանր պաշտօնի կոչել,—ասաց Հայրիկը,—ես ի՞նչ կարող եմ անել, պէտք է ընդունեմ։

—

Սաժերիկայումն էի արդէն, երբ լրագիրներից իմացայ Խրիմեանին կաթողիկոսութեան հաստատելու լուրը։ Եւ ճիշտ այն ժամանակ, երբ Թիֆլիսից պատգամաւորութիւնը ճանապարհ էր ընկնում Խրիմեան կաթողիկոսին Երուսաղէմից Կովկաս տանելու համար, ես յանդգնութիւն ունեցայ Խրիմեանին մի նամակ ուղարկելու, որով թէև շատ քաղաքավարի ու նուրբ ոճով, բայց և այնպէս աշխատել էի հասկացնել, որ նա չափազանց մեծ սխալ էր գործել՝ մերժելով Եւրօպա գալու առաջարկը և ընդունել կաթողիկոսութիւնը։

«Կովկասցիները,—գրել էի մօտաւորապէս այդ նամակում,—ձեզ Կովկաս են տանում նոյն նպատակով, ինչ նպատակով որ մենք ձեզ Եւրօպա էինք ուզում բերել։ Թէև դա մի մեծ սխալ է, որովհետև կաթողիկոսական վանդակը չափազանց նեղ է այդպիսի գործունէութեան համար, բայց և այնպէս ժողովուրդը, ձեր մէջ գերմարդկային ոյժ ենթադրելով, ձեզնից հրաշքներ է սպասում։ Երանի թէ չը հիասթափվէր այդ ժողովուրդը»։

Նամակս ուղարկեցի մի այլ՝ նոյնպէս Երուսաղէմում աքսորական եպիսկոպոսի միջոցով, որի հետ ընկերներից մէկը՝ հանդուցեալ Գարեգին Զիթճեանը նամակագրութիւն ունէր։ «Նամակը յանձնեցի ըստ պատկանելոյն»—գրել էր այդ եպիսկոպոսը Զիթճեանին իմ ուղարկած նամակի առիթով։

—

Ինչպէս անցեալով ասացի, Խրիմեանին վերջին անգամ ես տեսայ Էջմիածնի վեհարանում 1901 թւականի ամառը։ Կնոջս հետ մենք գնում էինք Պարսկաստան—Թաւրիզ։ Մեզ հետ էին և մեր վիպասան Վ. Փափազեանն ու իր կինը։ Հանգամանքից օգտվելով, գնացինք և Էջմիածին, մանաւանդ որ կինս երբէք չէր եղած այդ կողմերում և շատ հետաքրքրվում էր։ Կաթողիկոսը այնտեղ չէր. գնացել էր ձիով մերձակայ գիւղերը պտտելու, բայց հէնց մեր գնացած օրվայ երեկոյին վերադարձաւ։ Ես սաստիկ հետաքրքրվում էի նրան տեսնել. ուզում էի մի կերպ հասկանալ, թէ արդեօք չէ՞ կղնցել կաթողիկոսական գահը գերադասելով այն գործունէութիւնից, որի հասար ես նրան հրաւիրել էի։ Այդ հարցը ինձ համար նմանաւանդ հետաքրքրական էր այն տեսակէտից, որ ճիշտ այդ ժամանակներում հայ ժողովուրդը սաստիկ հիասթափված էր իր կաթողիկոսից, այն աստիճան հիասթափված, որ նրա այս կամ այն քաղաքը այցելելը նոյնիսկ բոլորովին անկատելի էր մնում։

Մենք վեհարանումն էինք, երբ կաթողիկոսը ձիուց իջաւ և իր կացարանը բարձրացաւ։ Նա մեզ նկատել և Կորիւն վարդապետից տեղեկացել էր մեր ով լինելու մասին։ Բայց մենք, այսինքն կինս և ես (առանց տ. և պ. Փափազեանների) կաթողիկոսին ներկայացանք միւս օրը առաւօտեան։ Ի հարկէ, մեր ներկայանալուց առաջ դարձեալ Կորիւն վարդապետը գնաց Հայրիկին յայտնելու, որ մենք ցանկանում ենք իրան տեսնել և նորից նրան յայտնել էր մեր ով լինելը։ Շատ պարզ է, որ ես սպասում էի, թէ կաթողիկոսը ինձ հետ պիտի հանդիպի իբրև մի հին ծանօթի։ Բայց որչափ մեծ եղաւ զարմանքս, երբ մենք ներս մտանք ու ձեռքը համբուրեցինք (այս անգամ նա այնպիսի ձևով ձեռքը մեկնեց, որ պէտք էր համբուրել), նա հարցրեց.

— Ո՞րտեղացի ես։

Ինձ թուաց, թէ նա հարցնում է՝ «որտեղից ես գալիս», ուստի պատասխանեցի.

— Նոր-Նախիջևանից ենք գալիս, Հայրիկ, և գնում ենք Թաւրիզ։

— Չէ, այդ չեմ հարցնել,—ասաց նա,—կըսեմ որտեղացի ես։

— Ի՞նչպէս, Հայրիկ, մի՞թէ ինձ չէք ճանաչում։ Ես երևանցի Խանազատեանն եմ։

— Է՛հ, Խայրիկը շատ մարդ կը տեսնի, ո՞ր մէկին յիշեմ։ Դուն էն ադր բելին ես (անուանի) հմ. բայց դուն դամբուր (կուզիկ) էիր։

— Հիմա էլ դամբուր եմ, Հայրիկ, ահա, նայեցէք,—ասացի և կրունկի վրա պտտվեցի Թիկունքս նրան ցոյց տալով։

— «Վտակի» մէջ այն դուն ես գրեր Թիւրքիայի մասին։ Շատ լաւ ես գրեր, կարդացի. պիտի խրկեմ այս ինչ փաշային (նա մի ինչ-որ հայ փաշայի անուն տուեց, որ այդ ժամանակ Պոլսում մինիստրական բարձր պաշտօնեայ էր), որ նա ալ կարդայ։ *) Ա՜խ ալ կինդ է. կարգուո՞ր ես. աղէկ ես ըրեր։

Եւ ապա, դառնալով կնոջս՝

— Ա՜խ շատ ընդ ծով և ընդ ցամաք պրտտող է. լաւ նայէ, որ առաջվան պէս խնթութիւններ չընէ։ Եթէ քեզի մոիկ չընէ, ինձ գրէ, ես ապահարզան կուտամ։ Թաւրիզ կերթաք,—ուղղեց խօսքը երկուսիս էլ,—խօսեցէք այնտեղի ազդեցիկներուն, որ Սալմասի ենիչերիներու սանձը քաշեն. շատ խայտառակութիւններ կընեն անոնք. ըսէք, որ Խայրիկը շատ դժգոհ է իրենցմէ։ Թաւրիզ տեղացի լաւ մտածող ու տեղին պայմանները հասկցող մարդիկ շատ կան. անոնց ըսէք, որ Եղիշէ Մուրադեանին ա-

*) Խօսքը «Փոքր Ասիայում չինվելիք երկաթուղիների առիթով» յօդուածիս մասին էր, որ տպագրվել էր ճիշտ այդ ժամանակ նոր լոյս տեսած «Վտակ» ժողովածուի մէջ։

ջակցին գործերը կառավարելու. Եղիշէն եռանդ շատ ունի, ամմա փորձառութիւն չունի։

Այսպէս մօտ 20 րօպէ Խրիմեանը մեզ հետ խօսեց, շարունակ մի հարցից միւսը անցնելով և մի վայրկեան անգամ ժամանակ չը տալով որ մենք խօսենք կամ մի բան հարցնենք, չը նայելով որ նա շատ ակար էր երևում, շնչառութիւնը կտրվում էր և հազիւ հազ էր կարողանում նախադասութիւնները միմեանց կապել։ Իսկապէս, նախկին հսկայական ու գեղեցկադէմ Խրիմեանից համարեա թէ կմախքն էր մնացել։

Ժամանակ չը տալով ինձ ոչինչ հարցնելու, նա ինքն էլ ոչ մի խօսքով չուզեց անցեալի խնդիրների մասին յիշել։ Նրա անկապ ու անվերջ խօսելը ինձ վրա այն տպաւորութիւնը թողեց, որ նա այդ անում էր դիտմամբ. նա ամեն կերպ զգուշանում էր, թէ մի գուցէ ես հին վէրքը բանամ. այդ բանից նա միանգամայն խուսափում էր։ Իսկ երբ իր խօսելիքը վերջացրեց, նա խկոյն աջը մեկնելով մեզ,

— Դէհ, բաւական է, յոգնեցայ, հիմա գնացէք,—ասաց նա, և մենք դուրս եկանք։

Այդ իմ վերջին տեսակցութիւնն էր Խրիմեանի հետ։

Ա.-Ազատ

Վ ե ր ջ

*) Տես «Մշակ» № 183

ներ, այդ ցոյցերի արտաքին փայլով հմայված, թէպէտ տարբեր եղանակով, աւետարբեր հրեշտակի նման շեփորում էին Թիւրքիայում նոր ծագող արշալոյսի զօրանշները, սակայն այսօր զուժկան, բօթաբեր ագռաւներ են դառել և չը յուսահատվելու երեխականներ կարդում ընթերցողների գլխին։

Երբնից ստացված վերջին տեղեկութիւնները հաղորդում են, որ այնտեղի շարժումների պարագլուխներից թւով 130 հոգի բանտարկված են և ձերբակալութիւնները շարունակվում են։

Մինչ այդքան շուտ մարվեց յեղափոխականացած Թիւրք մասսայի մէջ յեղափոխական առկայծող ոգին։

Թւում էր՝ թէ փառաւոր յաղթանակ տարան, երբ սուլթան Համիդի կառավարութիւնը նահանջից՝ «շախսի վէրկիսիի» տուրքի գանձելու որոշումը յետ վերցնելով. և «յեղափոխական» Թիւրք մասսան խլոյն հանդարտվեց, շնորհակալ եղաւ իր դթառատ միապետից, նախկին ճահիճը դառաւ։ Դա մի դիւանագիտական խաղ էր, որ շատ հեշտութեամբ իր նպատակին հասաւ։

— Լուր է պատում, որ ամենախիստ միջոցներով պիտի գանձվին նաև շնորհված տուրքերը,—հաղորդում էին վերջին տեղեկութիւնները Կարինից։

Թիւրք ժողովրդի մէջ մինչև չը նոսրանայ այնքան խտացած խաւարի մղձաւանջը, մինչև չը թուլանայ նրանց կրօնական ծայրաստիճան ֆանատիկոսութիւնը, մինչև իրանց համոզմունքի մէջ չը տապալեն աբսոլիւտ-թէօկրատիայի (աստուածապետականութեան) կուռքը, ցնորք պէտք է համարել Թիւրքիայի քաղաքական սեղմ մթնոլորտում Թիւրք ժողովրդի միջից ուժեղ քաղաքական-յեղափոխական կազմակերպութիւնների ծնունդ առնելը, որոնք տեղական օտար ազգութիւնների յետ. կուսակցութիւններին սիրաշահելու և համաթիւրքական յեղափոխութիւն ստեղծելու համար՝ բացարձակապէս, անաչառ կերպով ընդունէին, առանց կրօնական խտրութեան, բոլոր ազգերի իրաւահաւասարութիւնը, որից յետոյ ընդունակ կը լինէին քաղաքական-յեղափոխական խոշոր ակտեր կատարելու։

Մ. Ծատուրեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, 5 դեկտեմբերի

Հեռագիրներն արդէն հաղորդած կը լինեն Թէհրանի դէպքերի մասին։ Հետաքրքիր ընթերցողներն այժմ, երևի, սպասում են մանրամասնութիւններին։ Բարոյական պարտքս եմ համարում գոհացումս տալ նրանց հետաքրքրութեանը։

Ամսի 22-ին, կիրակի առաւօտեան, քաղաքիս պարսիկ ազգաբնակութեան մի խոշոր մասը յանկարծակի բաժանվում է երկու մեծ և ուժեղ բանակների, որոնք սկսում են միմեանց ապառնալ։ Այդ բանակներից մէկը—բուրժուազիան ի դէմս ինտելիգենցիայի, վաճառականների, գրական գործիչների և այլն—համախմբվում է մէջլիսի շուրջը, իսկ միւսը՝ ամբոխը միացած զօրքի հետ՝ բռնում է «Թօփխանէ» հրապարակը։

Պատճառը հետևեալն է.

Ներկայ Մահմեդ-Ալի շահը, որը իր բնաւորութեամբ ու խառնուածքով ճիշտ իր հօր՝ հանգուցեալ Մուզաֆֆէր-Էդդին շահի հակապատկերն է, իր թագաւորութեան սկզբից և էթ հակառակ ուղղութիւն է բռնում դէպի մէջլիսը և նպատակ է դնում իրան՝ բառնալ նրան մէջտեղից։ Մէջլիսն ևս, իր հերթին, ըմբռնելով նրա այդ դիտաւորութիւնը, անհաշտ դիրք է բռնում նրա վերաբերմամբ։ Ժամանակի ընթացքում իրար յաջորդող մի քանի երևոյթներ և ակտեր դալիս և խորացնում են այդ երկուսի միջև բացված վիհը։ Օրինակ՝ շահի ծննդեան տարեդարձի առիթով կատարվելիք հրավառութեան արգելումը մէջլիսի կողմից, սաղրազանի սպանութիւնը և այլն և այլն աւելի ևս են բորբոքում կրակը ու թշնամացնում իրար հետ շահին և մէջլիսին։

Մուզաֆֆէր-Էդդին շահի թողած փլատակների վրա թագաւոր նստած Մահմէդ-Ալի շահը մէջլիսին դիմադրելու համար անհրաժեշտ ֆինանսը չունենալով՝ առժամանակ ստիպված լռում է այժ և զօրութիւն հաւաքելու նպատակով։ Այդ այժն ու զօրութիւնը հաւաքելու համար նա մերթ մէջլիսին խարում է և մերթ քծնում, մերթ կեղծում է նրա առաջ և մերթ զիջում և այլն։

Ուրում է ժամը։

Մէջլիսը ուլտիմատում է ուղարկում շահին, որով նա պահանջում է Ամիր-Բահադրի և Սաադը-Դովլէի անպայման արտաքսումը քաղաքից։ Շահը գրում է նրան, որ նա վեց ամսով դադարեցնի իր գոյութիւնը։ Եւ իր այդ ոգով գրած հրովարտակը մէջլիս տանելու համար յանձնում է նախ Ալա-Էդ-Դովլէին և ապա Նասր-ուլ-Միւլքին, որոնք երկուսն էլ մերժում են։ Շահը, զայրացած նրանց այդօրինակ ըմբոստութեան վրա, հրամայում է անմիջապէս դահիճ կանչել։ Ակամ-էլ-Միւլքը, ընկնելով նրա ոտքերի տակ, մի կերպ աջողում է փրկել նրանց կեանքը։ Այնուամենայնիւ Ալա-Էդ-Դովլէն և Նասր-ուլ-Միւլքը նախ բանտարկվում և ապա աքսոր են ուղարկվում։

(Ասողներ էլ կան, որ իբր թէ այդ երկու բարձրաստիճան պաշտօնեաները շահի կողմից անարգանքի են ենթարկվել իրանց հակապետական միտումների և մէջլիսի կողմը թեքված լինելու համար)։

Շահի կամքը կարդացվում է մէջլիսում։

Կիրակի առաւօտեան բազարը կողպվում է։ Կատարվում է այն, ինչ որ քիչ առաջ ասացինք։

Թօփխանէում խտնված ամբոխը, նրա հետ նաև զօրքը, պահանջում է մէջլիսի վերացումն, իսկ վերջինս շուրջը համախմբված ինտելիգենցիան իր սնձով ու կեանքով պաշտպան է կանգնել նրան։

Քաղաքը գտնվում է զինուորական դրութեան տակ։ Պոլկովնիկ Լեախովը նշանակված է Թէհրանի գեներալ-նահանգապետ։ Նրա թարգմանն է շահի առաջ գեներալ Իսկենդեր-խան Սեթ-Խանեանը։

Միապետականներն ունեն մեծ պատրաստութիւն։ Նրանք իրանց տրամադրութեան տակ ունեն զօրքն ու ռազմամթերքը։ Կազակները միշտ երկու թնդանօթ ունեն իրանց հետ։

Մուշտէյիդ-Շէյխ-Ֆէյզուլլան սրանց պարագլուխն է։ Ամեն անգամ, երբ նա երևում է «Թօփխանէում», հաղարաւոր ամբոխը, իբրև ճիչ ուրախութեան, օդը լցնում է ձայների խառնիխուռն և սարսռեցուցիչ ելևէջերով։

Վարժին գաւառակից մօտ երկու հազար գիւղացիներ եկել և միացել են միապետականների հետ։ Սպասվում է նաև Ղարադաղի զօրքը։

—

Մէջլիսականներն ևս մեծ գործի վրա են։ Նրանք էլ իրանց պատրաստութիւնն են տեսնում։ Ֆիդայիները, որոնք զինված են Մաուզերի հրացաններով, կանգնած իրանց դիրքերում, անհամբեր սպասում են միապետականների և զօրքի գրոհին։ Մէջլիսը Սպասալար երկնամերձ ժղկիթը, որը գտնվում է մէջլիսի շինութեան մօտ, ծառայում է ֆիդայիներին իբրև ամուր և ապահով դիրք։ Մէջլիսի դրան ճակատին ծածանվում է պարսկական ազգային դրօշակը։

Մէջլիսականները աշխատում են շփոթ և իրարանցում դցել միապետականների մէջ։ Նրանց անձնուէրները գալիս են Թօփխանէ և հազարաւոր ամբոխի մէջ ատրճանակ են պարպում միապետականներին գրգռող ճառախօս հոգևորականների վրա։ Վայրագ ամբոխը այդպիսիներից մէկին այսօր սրախողխող արաւ, իսկ մի ուրիշին կախեց...

Թօփխանէում անընդհատ հրացանաձգութիւն է։ Գնդակները վիժում են մէկը միւսի ետևից։ Անապահովութիւնը կատարեալ է։ Քաղաքի եւրոպական մասի խանութները կիսով են միայն բաց։

Շուտով տեղի կունենայ արիւնահեղ ընդհանուր։ Կորոշվի մէջլիսականներից և միապետականներից մէկն ու մէկի բաղդը։ Պարսկաստանը պատժութեան մէջ թերևս ունենայ իր «Բարդուղիմեան գիշերը»։

Եթէ միապետականները յաղթողի դերի մէջ մնան, անպայման սրի կանցկացնեն բաբիներին, որոնք անխիտ մէջլիսականներ են և որոնց համար նրանք նախօրօք ատամներ են կրճատցնում։

Միապետականների հառախօսները, ամբոխի ստոր ինստինկտները շոյելու համար, շահագործում են նաև Խրիմեանի անունը։ Նրանք ծանրանում են սէյիդ Զէմալի վրա, որը նրա յիշատակին, հոգեհանգստի օրը, մի քանի խօսք է նուիրել։ Նրանց ասելով՝ սէյիդ Զէմալը զուրանը անարգել է, նրանից ցիտատներ մէջ բերելով անօրէնների շրջանում, մի բան, որը մէջլիսականների գաղափարն է և հաւասարութեան արդիւնքը։

Գիշերվայ ժամը $7^1/_2$-ից սկսած փողոցները դատարկվում են, իսկ ժամը 9-ից սկսած սկսվում է ալանն ու թալանը։ Աւարառու և սրիկայ մարդիկ պարարտ հող են գտել իրանց արհեստի համար։

Մինիստրական հին կաբինետը ընկած է։ Կազմված է նոր կաբինետ, որի մէջ են մտել Ամիր Բահադրն ու Սաադը-Դովլէն, առաջինը զինուորական մինիստրի պաշտօնով, երկրորդը դարձեալ արտաքին գործերի մինիստրի պօրտֆէյլով։ Այդ կաբինետի նախագահն է Նիզամ-ուլ-Միւլքը։

Հետևանքի մասին կը գրեմ։

Ս. Մուրադեանց

Յ. Գ.—Այսօր մի քանի դեսպաններ ներկայացել են շահին, որպէսզի հաշտութիւն ձգեն կուռող երկու կուսակցութիւնների մէջ։

Փիչ առաջ գիւղացիների հոծ բազմութիւն, զինված փայտերով, Ռօստօմարադ գիւղից քաղաք բերաւ այնտեղի յայտնի մուշտէիդին։ Միապետականների թիւը օրըստօրէ ստուարանում է։ Ընդհանուրի կողմից հաւանական է համարվում մէջլիսի յաղթութիւնը այս կամ այն ձևով։

Նոյն

ԽՈՒՌ ԼՈՒՐԵՐ

Մեր ստացած տեղեկութիւնների հիման վրա, Պարիզում վերջերս կայացել է հայ և Թիւրք յեղափոխական խմբակների ժողով, որ կայացրել է—առանց Թեթևամիտ երևալու վախն ունենալու—քաղաքական խոշոր հարցերի մասին շատ հեշտ վճիռներ, այսինքն վճիռներ, իրագործելի... Թրքի վրա ժողովը որոշել է հրաժարեցնել սուլթան Աբդիւլ-Համիդին գահից, փոխել ըէժիմը, հաստատել ներկայացուցչական ըէժիմ յեղափոխական միջոցներով, հաստատել միայն միջազգային մասնաժողով, հայկն և այլն։

Սրան ասում են՝ «ծիրը երազում կուտ կը տեսնի», կամ մկները հաւաքվեցին, որ կատուի վզից զանգակ կախեն, բայց... ով պէտք է կախէ զանգակը,—դեռ մինչև այսօր մնում է անյայտ։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դատաստանական պալատի յատուկ ատեանը վերջացրեց Մուրոմցեվի և միւսների գործի քննութիւնը։ Սկսվեցին կողմերի ընդդիմախօսութիւնները։ Դատախազը պաշտպանեց մեղադրանքը։ Պաշտպաններից խօսեցին Տեսլենկօ, Պերգամենտ և Մակլակով։

ԿՐԱԿՕՎ։ Վախճանվեց ֆինանսների նախկին մինիստր Դունաէվսկին։

ՄՕՍԿՎԱ։ Մեղվեդիէվ եղբայրների դրամատարը իւրացրեց 45,000 ռուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստր Կոկովցէվը, իր գործունէութեան 35-ամեակի առիթով ֆրանսիական ֆինանսների մինիստր Կոմբո